ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԿ ՏՎԵՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՆԱԶԱՐՅԱՆ Լ. Հ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Գաղտնիք չէ, որ 19-րդ դարի կեսերից սկսած՝ մանկության հիմնախնդիրը առանձնահատուկ կարևորության արժանացավ գիտական մտքի կողմից։ Դեռևս 1893թվականին ամերիկացի հետազոտող Օսկար Քրիսմանը գիտական շրջանառության մեջ ներդրեց «մանկաբանություն» եզրույթը։ Մանկաբանության ծագումն ու զարգացումը պայմանավորված էր հոգեբանության և մանկավարժության ոլորտներ թափանցած էվոլյուցիոն գաղափարներով և փորձարարական մանկավարժության կայացմամբ։ Ս. Հոլլի և Է. Մեյմանի աշխատությունների՝ 19-20-րդ դարերի միջանկյալ հատվածում, հիմնավորվեց մանկաբանական մոտեցումը[1]։

Մանկաբանության արագ կայացումը և մանկության նկատմամբ նման ուշադրությունն ուներ իր նախադրյալները։ Մանկության թեման արդեն հասցրել էր բավականաչափ արծարծվել ժամանակի առաջատար գեղարվեստական գրականության մեջ։ Համաշխարհային գրականության ասպարեզում մանկության հիմնախնդրի բուռն քարոզը անհրաժեշտ բազա դարձավ ապագա մանկակենտրոն կրթական տեսությունների կայացման համար՝ որպես առաջնահերթ ուղղություններ։

Մանկության նկատմամբ կենտրոնացումը և «մանկություն»-ը որպես ինքնուրույն հասկացություն դիտարկումը, ակնհայտորեն բացակայում էին մինչև 18-րդ դարը՝ պայմանավորված նախկին դարաշրջանների սոցիալ-մշակութային առանձնահատկություններով։ 18-րդ դարի լուսավորական շարժումը և դրա հետևանքով առաջ եկած կտրուկ փոփոխությունները առաջադրեցին նոր հասարակության կառուցման տեսլական՝ դրանից բխող մշակութային և այլ կարգի առանձնահատկություններով։ 17-րդ դարի վերջին և 18-րդ դարասկզբին պահպանողական դիրքորոշումների որոշակի մեղմացմանը զուգընթաց՝ առաջադրվում է երեխայի մարդկային արժանապատվության հասկացությունը, իսկ ավել ուշ՝ սեփական կյանքի տնօրինման որոշակի ինքնուրույնության իրավունքը։

Հենց լուսավորության դարաշրջանում էլ գեղարվեստական գրականությունն անփոխարինելի ծառայություն մատուցեց մանկավարժական մտքին՝ օգնելով նրան թոթափվել երեխայի ջոնլոկյան ընկալումից։ Երեխայի ընկալման նման վերափոխումը

հատկապես ակտիվ դրսևորվեց անգլալեզու գրականության մեջ։ Դեռևս 1840 -ականներին ի հայտ եկան երեխաների համար նախատեսված առաջին անգլալեզու ստեղծագործությունները՝ որպես բարոյախրատական հեքիաթներ։

Այս տեսանկյունից էական նշանակություն ունի գեղարվեստական գրականության մեջ, մանկության աշխարհի արտացոլման դիտարկումը՝ ելնելով այն պարզ ճշմարտությունից, որ դասական գրականության մեջ արտացոլվում են որոշակի ժամանակաշրջանում հասարակության հոգևոր, բարոյական, սոցիալական արժեքները, կողմնորոշիչները, քաղաքակրթության զարգացման ուղենիշները։Այդ համտեքստում մանկության արժևորման և երեխայի ամբողջական կերպարի կառուցման հարցում ակնառու առաջամարտիկ է ամերիկյան գրականությունը, որտեղ նշված հիմնախնդիրն իր արտահայտչականությունն է գտել Մարկ Տվենի ստեղծագործություններում[3]։

Երեխայի ընկալելի կերպարի հանդեպ դիրքորոշումները տարբեր հասարակություններում բնականորեն տարաբնույթ են եղել, ինչն օբյեկտիվորեն պայմանավորված է եղել ինչպես նրանց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, այնպես էլ սոցիալ-մշակութային առանձնահատկություններով։ Անառարկելի է, որ մանկության ընկալումը գոյություն չունի սոցիալ-մշակութային համատեքստից դուրս, հաշվառող՝ սեռատարիքային բաժանումը, ընտանիքի մոդելը, փոխհարաբերությունների համակարգը, մշակութային կողմնորոշումները, արտադրության առաջընթացը և այլն։

Մարկ Տվենը համաշխարհային գրականության մեջ երեխայի կերպարի քարոզման առաջամարտիկն է եղել։ Նրա գրական ժառանգության մեջ մանկության թեման ունի իր յուրահատկությունները, իսկ ստեղծագործություններում ներկացվում է նոր տիպի երեխայի մոդել, որն իր բնական ամբողջության մեջ խորապես տարբերվում է ռոմանտիզմի դարաշրջանի հեղինակների ներկայացրած կերպարներից։ Եթե ռոմանտիզմի դարաշրջանի գրականության մեջ երեխայի կերպարին առաջադրվում են վաղվա օրվան պատրաստ լինելու, մոտակա «նվաճումներին» ձգտելու օրակարգը, ապա Տվենը հանդես է գալիս ռեալիզմի դիրքերից, որտեղ էապես կարևոր են երեխայի ձգտումներն ու պահանջմունքներն իրական ժամանակատարածքային կտրվածքում։ Նրա ներկայացրած կերպարները կարծես թե դարձան «մեծահասակների հասարակության» մերժման ուրույն խորհրդանիշներ, որտեղ պարտադրված կարգապահությանը փոխարինում է արկածախնդրության անզուսպ ծարավը, վաղվա օրվա հանդեպ անորոշությունը։

Մանկությունը ոչ միայն յուրահատուկ վիճակ է, այլև կարևորագույն գործընթաց. մանկության ֆենոմենը Մ. Տվենի աշխատություններում դիտարկված է հենց այս բնականորեն հիմնավոր շարժընթացի մեջ, որտեղ ժխտվում է դրա ստատիկ ընկալումը։ Առհասարակ,

ամերիկյան գրականության մեջ երեխան դիտարկվում է որպես ռահվիրա և մարդ, որը գտնվում է մշտական շարժման մեջ: Այս մարդը՝ երեխան, ունի ազատություն սեփական կյանքի հեռանկարի ընտրության մեջ և ջանում է իրեն տեսնել այդ հնարավորության շրջանակներում:

Ամերիկյան իրականության սոցիալ-մշակութային առանձնահատկությունները 18-րդ դարում էապես առանձնահատուկ էին. հիմնականում ներգաղթյալներից և նրանց սերունդներից կազմված հասարակությանը բնորոշ չէր եվրոպական ճնշող պահպանողականությունը, սոցիալական երաշխիքների փոխարեն մարդուն առաջարկված էր ազատություն սեփական «բախտի» որոնման հարցում, վարքի և փոխհարաբերությունների դոգմատիկ վարքականոնը փոխարինված էր համագործակցության մղումով, կյանքի հարմարավետությունն ու բարեկեցությունը զգալիորեն զիջում էին հին աշխարհին: Հենց այս մեկնարկային իրողությունների հաշվառմամբ էլ Մարկ Տվենը կառուցել է իր հերոսների պատկերավոր մանկությունը, որտեղ բուռն կերպով ընթանում է նրանց անձի զարգացումը: Նրանք ազատ են, քանի որ իրենց կյանքը սկսում են «մաքուր էջից»՝ չունենալով պատմական խոր արմատներ և սոցիալապես հիմնավորված ավանդույթներ: Այդ ազատությունը նրանց գուցե սոցիալապես խոցելի է դարձնում, սակայն ստեղծում է ինքնակենտրոնացման, ինքնակարևորման և ինքնադրսևորման լայն դաշտ, որտեղ ի վերջո մարդիկ ունակ կլինեն «գտնելու իրենք իրենց»: Հենց այդ է պառճառը, որ Մարկ Տվենի հերոսները միշտ չէ, որ լի են լավատեսությամբ, սակայն այս կամ այն կերպ փորձում են ինքնայուրացվել և ինքնահաստատվել այս կյանքում:

1874թվականին Մարկ Տվենն սկսեց և 1875 թվականին ավարտեց իր թերևս ամենահայտնի վեպը՝ «Թոմ Սոյերի արկածները»:[2] ի դեպ այն ի սկզբանե մտահղացվեց ոչ թե որպես գիրք երեխաների համար, այլ որպես գիրք մանկության մասին: Գրողը, որը ականատեսն էր ԱՄՆ քաղաքացիական պատերազմի, այլևս մանկությունը դիտարկում էր. որպես դրախտ, որը կորցնել չի՛ կարելի: Հետագայում Մարկ Տվենը կխոստովանի, որ «Թոմ Սոյերը» պարզապես վեպ չէ, այլ կո՛չ:

Ամերիկյան իրականությունը, որում ապրել էր գրողը, չափազանց իրատեսական էր, զուրկ ավելորդ հուզականությունից, ապագայապաշտությունից: Նոր ձևավորվող երիտասարդ պետությունում ամեն ինչ ավելի իրական էր թվում, թե՛ ռիսկերը, թե՛ հնարավորությունները և թե՛ կյանքի կառուցման ուղիները, այս ամենը ամերիկյան իրականությունը գործնականորեն էր լիցքավորում: Նման սոցիալ-մշակութային իրականության մեջ հիմնականում կարևորվում էին ստանում ռեսուրսները, երեխան և մարդը հետզհետե գալիս են այն համոզման, որ ամենամեծ ռեսուրսը, որով օժտված են՝ հենց իրենք են, որ կան, իրենց իրական էությունն է, որը

պետք է բացահայտել և կիրարկել:

Հենց այս պատճառով էլ, Մարկ Տվենը չափազանց ռեալիստ էր: Նրան չափազանց հոգնեցրել էին կյանքի ընկալման ռոմանտիկ ու անհասանելի գույները: Այդ իսկ պատճառով իր հերոսի՝ Թոմ Սոյերի զարգացման գործընթացը պատկերելիս նա ծաղրեց բոլոր անիրական մղումներն ու կրքերը, ցրեց կյանքի ընկալման մելանխոլիկ վտանգավորությունը՝ կյանքը վերածելով ապրելու գործընթացի ու հաջողության աղբյուրի:

Մարկ Տվենը երեխայի դաստիարակության գործում նախապատվությունը տալիս էր պրագմատիստական սաղմերին, որտեղ էապես ճշմարիտ է սեփական փորձը: Հենց դա էր պատճառը, որ գրողը կիրառելով իր սարկազմիկ լեզուն, ծաղրում է մանկական կիրակնօրյա դպրոցի անբնականությունը, քանզի երեխան ձգտում է ճանաչել իրեն, իր հասակակիցներին և իրեն շրջապատող աշխարհը: Այս մտայնությունների հանրագումարում Տվենը կառուցեց իր հերոսին՝ Թոմին, որը 12 տարեկան անհոգ ու չարաճճի դպրոցական էր և մի քանի ամիս տևած արկածների արդյունքում հասցրեց գտնել իր սերը՝ Բեքի Թետչերին, ականատես լինել սպանության և բռնել մարդասպանին, փախչել տնից, դառնալ ծովահեն և ապրել մի կղզում, մոլորվել քարանձավում և վերջիվերջո ապահով դուրս պրծնել ու գտնել մի այնպիսի գանձ, որն արժի տասներկու հազար դոլար, և այդ գումարը կիսել իր ընկեր Հեքլբերի Ֆիննի հետ:

Դիտարկվող վեպի մեջ Մարկ Տվենը հմտորեն ցուցադրել է «մեծերի» և «մանուկների» աշխարհների հակադրությունը: Սակայն պետք է նշել, որ այդ հակադրությունը ոչ թե սերնդային բնույթ է կրում, այլ ելնում է կրթության փիլիսոփայության իրողությունից, որտեղ բախվում են նյութական և ձևական կրթության փիլիսոփայությանը վերաբերվող տարատեսակ սոցիալ-մշակութային իրողություններ: Հիմնվելով իր ժամանակի սոցիալ-մշակութային առանձնահատկությունների վրա՝ հեղինակը այսպես կոչված «մեծահասակների» և «երեխաների» հակամարտությունը հանգուցալուծում է՝ նախապատվությունը տալով նյութական կրթությանը: Ըստ Մ. Միդի՝ ավանդական հասարակություններում բացակայում է միջսերնդային կոնֆլիկտը, դժվարություններ չեն լինում անչափահասների սոցիալականացման գործընթացում[4]: Սակայն ամերիկյան հասարակությունն ի սկզբանե ձևավորվում էր որպես նոր տիպի հասարակություն:

Մանկության հիմնախնդրին մարկտվենյան անդրադարձը դիտարկվում է երեխայի բարձրարժեքության ընկալման տեսանկյունից, երեխայի մեջ բարձրարժեքը տեսնելու և այն ինքնուրույնության խթանմամբ դաստիարակելու ցանկությունից: Հենց այդ մոտեցումն է գրողը համարում դոմինանտ անձի զարգացման և կայացման գործում: Այդ են վկայում վեպի հերոսի անձնային որակները. Թոմը երազող է և գյուտարար, համարձակ, ազնիվ, ընկերական, չի սիրում զրպարտիչներին, առինքնող է՝ իր վրա է վերցնում սիրելի աղջկա՝ Բեքիի մեղքը: Ի

վերջո Թոմն, իր ընկեր Հեքի հետ միասին պատվով դուրս է գալիս բոլոր վտանգավոր իրավիճակներից և ամենաէականը՝ բացահայտում իր լավագույն որակները:

Մարկ Տվենն իր հերոսի անձի զարգացման պատմության նկարագրմամբ քարոզում է իր ժամանակի ամերիկյան բարոյականության հիմնարար թեզերից մեկը՝ ապրել առանց նախապաշարմունքների և խնդիրների, որոնք մեզ պարտադրում են ուրիշները: Թոմի շուրթերով հեղինակն արտահայտում է երջանկությանն ուղղված էական մի միտք՝«Եղի՛ր ավելի պարզ, և մարդիկ դեպի քեզ կգրավվեն»: Չնայած կյանքի բոլոր անհարմարություններին՝ թոմսոյերյան ընկալմամբ լավատես լինելն ի ծնե նվեր է, մարդուն երջանիկ դարձնելու բանալի, որի շնորհիվ վեպի հերոսն ստեղծում է իր ուրույն կյանքը և իր երջանկությունը:

Ամերիկյան իրողության սոցիալ-մշակութային առանձնահատկությունների մեջ կարևոր տեղ ունի հանրահայտ «ամերիկյան երազանքի» ընկալումը: Հիմնվելով իր ժամանակաշրջանի այդ յուրահատկության վրա՝ Տվենը դիտարկվող ստեղծագործությունում ներակայացնում է իրականության հաղթահարման և հաջողության էական գաղտնիքներից մեկը: Ըստ վեպի սյուժեյի՝ Թոմին հաջողվում է բացահայտել կյանքի կարևոր օրինաչափությունները. ցանկացած գործ առանց դժվարության կդառնա հոբբիի, եթե ուղղակի փոխվի վերաբերմունքը նրա նկատմամբ: Երևակայության ու հնարամտության օգնությամբ Թոմն իր պատիժը վերածեց զվարճանքի՝ սկսելով գովազդել ցանկապատը ներկելու գրավչությունը, ինչի արդյունքում հավաքեց պատրաստակամ մարդկանց մի ողջ շարան: Փաստացի Մարկ Տվենին հաջողվել է մարքեթինգի և գովազդային ինդուստրիայի ողջ տրամաբանությունը ներկայացնել աշխարհի ընկալման մանկական մոտեցման մեջ:

Այսպիսով, Մարկ Տվենը Թոմ Սոյերի արկածները ստեղծագործությամբ ակնառու կերպով ցույց տվեց ամերիկացի տղաների մանկական աշխարհը, ովքեր ստիպված էին բախվել մեծահասակների աշխարհի դաժանության և անարդարության հետ: Հենց այդ պատճառով է, որ Մարկ Տվենը աշխարհի բարեշրջմանն ուղղված իր հույսերը կապում էր ստեղծագործական ներուժի վերածնման, երեխայի հետ դեպի մանկություն վերադարձի հետ: Այսպիսով, ըստ Տվենի՝ հենց երեխան է ի վիճակի փրկել աշխարհը՝ մեծահասակներին վերադարձնելով մանկության արժեքների կորսված հիշողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թոփուզյան Ա.Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Եր.: Լինգվա, 2009:
2. Մարկ Տվեն, Թոմ Սոյերի արկածները, Երևան, «Անտարես», 2021:

3. Зверев А.М. Марк Твен и его роль в развитии американской реалистической литературы. М., Наука, 1987.

4. Мид М.Культура и мир детства. М., Наука, 1988, 429с.

THE RELATIONSHIP BETWEEN CHILDHOOD AND SOCIO-CULTURAL ENVIRONMENT IN MARK TWAIN'S WORKS

The article examines the issues of childhood in the socio-cultural environment in the works of Mark Twain. Marktven's approach to the issue of childhood is viewed from the point of view of the child's perception of high value, the desire to see the high value in the child, to nurture it by promoting independence.

***Keywords**: Mark Twain, childhood, environment, upbringing, child, personality development, values, perception*